ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2009

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների

Բովանդակություն

Հիմնական գործունեությունը 3
Գերակա խնդիրների և միջոցառումների իրականացման արդյունքները 5

1. Գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքի ձևավորում 5
2. Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացում 7
3. Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում 8
4. Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքակազմի հասանելիության ապահովում 10
5. Միջազգային չափանիշներին համապատասխան համապատասխանության գնահատման համակարգի ձևավորում 11
6. Հայաստանը՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորումն, ներկայացում և ամրապնդում 11
7. Հայաստանի՝ որպես գործարարական գործունեության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորում և ամրապնդում 12
8. Կայուն զարգացման ծրագրի իրականացման համակարգի ներդրում 12

Հիմնական գործունեությունը

2009 թվականը ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Նախարարություն) համար նշանավորվել է առաջնահերթ քաղաքականությունների ուրվագծման, ինստիտուցիոնալ ձևավորումների, լայնամասշտաբ ծրագրերի նախաձեռնումների, կարողությունների զարգացմանն ուղղված գործընթացների մեկնարկի տեսանկյունից:

Նախարարության գործունեության առանցքում դրվել են հասարակության հետ երկխոսության ընդլայնման, հաշվետվողականության մակարդակի և կառավարման արդյունավետության բարձրացման սկզբունքները:

Նշված գործելակերպը հնարավորություն տվեց՝

ա) համարժեք արձագանքել նոր մարտահրավերներին,

բ) արդյունավետ շարունակել մեկնարկած ինստիտուցիոնալ բարեփոխումները,

գ) հիմքեր ձևավորել հեռանկարային զարգացման ծրագրերի համար:

- Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա հնարավորինս մեղմելու և սպասվող սոցիալական լարվածությունը կանխելու նպատակով համալիր միջոցառումներ ձեռնարկվեցին ռեսուրսների նպատակային ուղղորդման համար: Մասնավորապես.

– *Մոբիլիզացվեցին գործընկեր դոնոր կազմակերպությունների ռեսուրսները:*

Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակներում ներգրավվեց շուրջ 700 մլն ԱՄՆ դոլարի վարկային ռեսուրս՝ տնտեսության ամենաառաջնահերթ ոլորտների համար ապահովելով ոչ միայն ճգնաժամին դիմակայելու, այլ նաև հեռանկարային զարգացման նախադրյալներ: Համաշխարհային բանկի Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում ձևավորվել է նաև քաղաքականությունների աջակցության 60 մլն ԱՄՆ դոլար վարկային ռեսուրսով փաթեթը, ինչը էական օժանդակություն է ցուցաբերել պետության սոցիալական պարտավորությունների կատարման մասով:

Արժույթի միջազգային հիմնադրամի հետ կառուցողական և հետևողական համագործակցությունը հնարավորություն տվեց տնտեսության մեջ ներարկել շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար միջոցներ՝ դրանով թույլ չտալով հանրապետությունում հարկաբյուջետային և դրամավարկային ցնցումներ:

Ասիական զարգացման բանկի հետ հիմք դրվեց լայնամասշատբ համագործակցության: Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագրի շրջանակներում 80 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցություն ցուցաբերվեց աղետի գոտու վերականգնման, բյուջեի սոցիալական ծրագրերի իրականացման համար:

Եվրամիության հետ շարունակական բանակցությունների արդյունքում հստակ պայմանավորվածություն ձեռք բերվեց 100 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցության վերաբերյալ:

Մեկնարկեց Հայաստանի համար աննախադեպ ենթակառուցվածքային ծրագիրը: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի փուլային իրականացման համար ԱԶԲ-ն 500 մլն ԱՄՆ դոլարի պարտավորություն ստանձնեց, այդ թվում՝ 60 մլն ԱՄՆ դոլար արտոնյալ վարկային ռեսուրս տրամադրելով առաջին փուլի համար:

– *Հակաճգնաժամային քաղաքականության իրականացման շրջանակներում գործուն աջակցություն ցուցաբերվեց իրական հատվածին:*

Այս համատեքստում տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի աջակցության շրջանակներում իրականացվել է ԱԱՀ-ի օրենքում փոփոխություն, ըստ որի 300 միլիոն դրամը գերազանցող առանձին ներդրումային բնույթի ապրանքների ներմուծման, ինչպես նաև Կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի համար ներմուծվող ապրանքների դիմաց ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվում է 3 տարի ժամկետով:

Մասնավոր հատվածի ներկայացրած բիզնես ծրագրերի քննարկման և աջակցության ձևաչափի որոշման համար ստեղծված Օպերատիվ շտաբում դիտարկվել են մոտ 300 բիզնես ծրագրեր, որոնցից դրական ընթացք են ստացել 14.1 միլիարդ դրամ արժողությամբ 24 նախագծեր:

– ***Իրականացվել են հետազոտական-վերլուծական աշխատանքներ***

Ճգնաժամին դիմակայելու և հետագա զարգացումը պլանավորելու իմաստով ձեռքբերումներ են արձանագրվել նաև հետազոտական-վերլուծական բնագավառում: Արդյունքների ամփոփման և իրավիճակի գնահատման առումով հիմք է դրվել թեմատիկ տնտեսական զեկույցների թողարկման գործելակերպի, որի համատեքստում թողարկվել է Նախարարության «Հայաստանի տնտեսական զեկույց 2009. Ճգնաժամից դեպի նոր զարգացում» զեկույցը:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել «Գլոբալ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա. կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներ» թեմայով միջազգային համաժողովին:

- Հայաստանի ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը մեկ ամբողջական տեղեկագրում զետեղելու և այն ամբողջ աշխարհում շահագրգիռ կառույցներին և ընկերություններին ներկայացնելու համար Նախարարությունը և PEI Media առաջատար ֆինանսական տեղեկատվական ընկերությունը, որը հրապարակում է Infrastructure Investor ամսագիրը, պատրաստել են Հայաստանի ծրագրերի մասին հատուկ թողարկում: Թողարկման տպագիր օրինակները տարածվել են Infrastructure Investor-ի 2009թ. սեպտեմբերի համարին կից, որը տրամադրվել է Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի՝ Ստամբուլում կայանալիք տարեկան համաժողովների մասնակիցներին: Հատուկ թողարկման օրինակները կբաժանվեն նաև Infrastructure Investor-ի տարեկան համաժողովների, ինչպես նաև վերազգային այլ կառույցների և արդյունաբերական ընկերությունների նմանօրինակ հանդիպումների ընթացքում:

- Նախարարությունը հետևողականորեն իրականացրել է նաև մեկնարկած բարեփոխումների կարողությունների զարգացման և կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ հիմք ընդունելով Նախարարության եռամյա ռազմավարությունը: Այս իմաստով արմատական տեղաշարժեր են ապահովվել աշխատակազմի կադրային բազայի համալրման և, հատկապես, երիտասարդ մասնագետների ներգրավման և կարիերային առաջընթացի համար լայն հնարավորություններ ստեղծելու առումով:

- 2008թ. դեկտեմբերին աշխատանքներ նախաձեռնվեցին ՀՀ-ում Բրիտանական Խորհրդի գրասենյակի հետ՝ Հայաստանում Եվրոպական Միության կառույցների հետ աշխատող քաղաքացիական ծառայողների կարողությունների զարգացման ուղղությամբ: Մշակվեցին հարցաշարեր և իրականացվեց կարիքների գնահատում, որը թույլ տվեց ավելի թիրախային կազմակերպել վերապատրաստման դասընթացները: Ս.թ. նոյեմբերի 17-ին ստորագրվեց «Փոխըմբռնման Հուշագիր» ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ քաղաքացիական խորհրդի և ՀՀ-ում Բրիտանական Խորհրդի միջև, որը ազդարարեց «Եվրամիություն. Համագործակցություն և հմտություններ» (EU Skills) եռամյա ծրագրի սկիզբը:

- Շարունակվում է քաղաքականությունների ազդեցության գնահատման համակարգի ներդրմանն աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի դրամաշնորհի շրջանակներում հետազոտական կարողություններ ձևավորելու գործընթացը: Շուտով, խորհրդատվական կազմակերպության կողմից 1000 խոշոր հարկատուների տվյալների ուսումնասիրության հիման վրա կկառուցվի Հայաստանի տնտեսության ընդհանուր հավասարակշռության մոդելը:

- Մշակվել և ՀՀ Նախագահի կողմից 2009թ. մայիսի 6-ի N ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատվել է «ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկը»:

ՀՀ պետական կառավարման մարմիններից երկամսյա պարբերականությամբ 2 անգամ հավաքագրվել է տեղեկատվություն միջոցառումների ցանկի կատարման ընթացքի վերաբերյալ: Հավաքագրված տեղեկատվությունն ամփոփվել և ներկայացվել է ինչպես ՀՀ կառավարության աշխատակազմ, այնպես էլ Հայաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակություն:

- 2009 թվականի փետրվարի 17-ին Երևանում կազմակերպվել և անցկացվել են ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և իրավական հարցերով ենթակոմիտեի, իսկ սեպտեմբերի 22-ին՝ ՀՀ-ԵՄ Համագործակցության կոմիտեի նիստերը: Կազմակերպվել և անցկացվել են Հայ-բելառուսական

(մարտի 18-20), հայ-ուկրաինական (հոկտեմբերի 16-18) տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովներիի, հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի երկու հանդիպումներ (մայիսի 13 և նոյեմբերի 3):

ՀՀ կառավարության 2009թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված Նախարարության պատասխանատվությամբ 25 կետերից (որոնցից 13 կետը ՀՀ կառավարության որոշման նախագծեր, իսկ 12-ը՝ ՀՀ օրենքի նախագծեր) 6-ը կատարվել են ոչ էական ուշացումներով, 10-ը՝ սահմանված ժամկետներում, 3՝ երկարաձգվել են և կատարվել սահմանված ժամկետներում, 4՝ ՀՀ կառավարության որոշմամբ համարվել են չեղյալ, 2՝ ՀՀ կառավարության որոշմամբ ուժը կորցրած են համարվել:

Հաշվետու ժամանակաշրջանի համար Նախարարության գործունեության օրակարգում թիրախավորվել էին ութ գերակա խնդիրներ, որոնց իրագործման համար իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Գերակա խնդիրների և միջոցառումների իրականացման արդյունքները

1. Գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքի ձևավորում

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Հայաստանում գիտելիքահենք տնտեսության ձևավորման հայեցակարգի մշակման ուղղությամբ և առաջարկվել է քաղաքականության խնդիրների շրջանակը:

- 2009 թվականին ԱՄՆ-ից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից ժամանած 10 ականավոր ֆիզիկոսներից կազմված փորձագիտական հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի ամենամեծ գիտական կազմակերպության՝ Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի միջազգային գիտական փորձաքննությունը: Փորձաքննության նպատակն էր ճշգրտել և արդիականացնել ինստիտուտում տարվող գիտական հետազոտությունների ուղղությունները, իրականացնել ինստիտուտի կառավարման բարեփոխումները և բարձրացնել գիտական աշխատանքների արդյունավետությունը: Փորձագիտական երաշխավորությունների հիման վրա ներկայումս մշակվում է այս գիտական կազմակերպությունը Հայաստանի ազգային լաբորատորիայի վերափոխելու, այն գիտական գերազանցության կենտրոն դարձնելու ծրագիրը: Սա ենթադրում է կենտրոնի կառավարման, ֆինանսավորման և գիտական համագործակցության կազմակերպման ժամանակակից մեխանիզմների կիրառում: Նշված խնդիրների լուծման նպատակով առաջին անգամ 2010թ. համար բյուջետային ֆինանսավորում է նախատեսվել ինստիտուտի միջազգային գիտական համագործակցությունն ընդլայնելու համար:

- «Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ում «Ցիկլոն-30» իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և ՀՀ-ում Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագրի ուղղությամբ ՀՀ-ում Միջուկային բժշկության կենտրոնի ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի մասնակցությամբ 2009թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Բրյուսելում կայացել են հանդիպումներ IBA S.A. ընկերությունում: Արդյունքում Նախարարության և IBA S.A. ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր և հավաքվել ցիկլոտրոն սարքի ձեռքբերման գործարար ծրագրի կատարելագործման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Ձեռք է բերվել համաձայնություն Բելգիայի կառավարության կողմից տվյալ ծրագրի ֆինանսավորման ապահովման համար անհրաժեշտ քայլեր կատարելու մասին:

IBA S.A. ընկերության և Advanced Cyclotron Systems (ACS) կանադական ընկերության ներկայացուցիչների հետ Հայաստանում նախարար Ն.Երիցյանի և Միջուկային բժշկության ծրագրի աշխատանքային խմբի մասնակցությամբ տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում կատարվել են համեմատական հաշվարկներ ցիկլոտրոնների համար, ներառյալ ռադիոիզոտոպների արտադրողականության, կապիտալ, պահպանման և շահագործման ծախսերը:

ՀՀ կառավարությունը պաշտոնապես դիմել է Բելգիայի կառավարությանը ցիկլոտրոնի գնման համար սուբսիդավորում ստանալու նպատակով:

Միջուկային բժշկության կենտրոնի ծրագրի կառավարչի կողմից կատարվել են ծրագրի իրականացման 6 հնարավոր գործարար տարբերակների հաշվարկներ և ներկայացվել ՀՀ

էկոնոմիկայի նախարարին: 6 տարբերակները ներառող փաթեթը ներկայացվել է ծրագրի օտարերկրյա գործընկերներին և աշխատանքային խմբին՝ բոլոր տարբերակների վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու ակնկալիքով:

- ՀՀ կառավարության որոշմանը համապատասխան Նախարարության և ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր «Դիլիջան քաղաքում միջազգային գիտակրթական և տեխնոլոգիական կենտրոն հիմնադրելու վերաբերյալ»: Կենտրոնի կազմավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակված կենտրոնի կանոնադրության և կառուցվածքի նախագիծը, ինչպես նաև հիմնադրման նախապատրաստական միջոցառումների ծրագիրը սահմանված կարգով դրվել են շրջանառության մեջ:

- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և ՌԴ կառավարության միջև նանոտեխնոլոգիաների օգտագործման բնագավառում համագործակցության մասին» Համաձայնագրի նախագիծը, որն անցել է ներպետական համաձայնեցման գործընթացները և օրերս կներկայացվի ռուսական կողմին:

- «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի» կառուցվածքի և գործունեության հայեցակարգը մշակելու նպատակով Նախարարության կողմից կազմակերպված մրցույթի արդյունքում ընտրված երկու փորձագետները, համաձայն Նախարարության պատրաստած տեխնիկական առաջադրանքի, մշակել են հայեցակարգի նախագիծը: Նախարարությունը կազմակերպել է նախագծի վերաբերյալ շահագրգիռ կողմերից ստացված կարծիքների քննարկում, որոնք կամփոփվեն և կտրամադրվեն փորձագետներին հայեցակարգի նախագիծը լրամշակելու համար:

- Մշակվել և ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 2-ին կայացած նիստի հավանությանն է արժանացել «Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման հայեցակարգը», որը կնպաստի արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերն էլեկտրոնային եղանակով ընդունման, քննարկման և հրապարակման համակարգերի ներդրմանը, մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից հավատարմագրված միջազգային և օտարերկրյա որոնման կենտրոններին գյուտերի փորձաքննության անցկացման աշխատանքների պատվիրակման (outsourcing) կիրառման ապահովմանը, արդյունաբերական սեփականության տեղեկատվական բազաների փոխանակման շրջանակների ընդլայնմանը և հանրության համար ինտերնետային ցանցի միջոցով դրանց մատչելիության ապահովմանը:

- ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է «Մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքարն ուժեղացնելու և դրա իրականացումը համակարգելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով», որի խնդիրներն ու նպատակներն են մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ ուղղված պայքարի արդյունավետության բարձրացումը, դրա համակարգումն ու հանրությանը այդ աշխատանքների վերաբերյալ իրազեկումը: 2009թ. երկրորդ կիսամյակում հրավիրվել են հանձնաժողովի 2 նիստեր:

- Մշակվել է մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը:

- Մշակվել և Մտավոր սեփականության գործակալությունում ներդրվել է «Գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդունման» էլեկտրոնային առցանց համակարգը:

Սկսվել է մտավոր սեփականության գնահատման համակարգի կայացման գործընթացը: Նախարարությունն ուսումնասիրել է այդ բնագավառի զարգացման միտումները՝ գալով այն եզրահանգման, որ միանշանակ «ճիշտ» համարվող գնահատման մեթոդներ չկան: Ուստի գնահատումն անհրաժեշտ է սկսել կամավոր կիրառում ունեցող ստանդարտների համակարգի ձևավորմամբ: Այդ կապակցությամբ ուսումնասիրվել են միջազգային գործելակերպում ճանաչում ունեցող մտավոր սեփականության գնահատման ստանդարտներ մշակող կազմակերպությունները: Արդյունքում ուրվագծվել է մտավոր սեփականության գնահատման համակարգի մոդելը:

2. Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացում

• 2009 թվականի ապրիլին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 կետում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով հնարավորություն է տրվել ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն դրամ և ավել ներդրում կատարելու դեպքում ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետները հետաձգել 3 տարի ժամկետով: ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ թույլտվություն են ստացել 4 ընկերություններ: Ընդհանուր առմամբ նշված ներդրումային ծրագրերի շրջանակներում ներկայումս իրականացվում են մոտ 31 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, ինչը հնարավորություն կտա տնտեսության տարբեր ոլորտներում ստեղծել մոտ 650 նոր աշխատատեղեր:

• ՀՀ կառավարությունը, կարևորելով ազատ տնտեսական գոտիների դերը տնտեսության զարգացման, հանրապետություն նոր տեխնոլոգիաների ներմուծման, տարածքային համաչափ զարգացման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում, որդեգրել է ազատ տնտեսական գոտիների ստեղծման քաղաքականություն: Այդ շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները: Մշակվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ կառավարությունը 2008թ. հավանության է արժանացրել Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման հայեցակարգը, որով նախատեսվում է Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում հիմնել թարմ գյուղմթերքների արտահանման լոգիստիկ կենտրոն: Հաշվի առնելով Հոլանդիայի փորձը՝ Նիդեռլանդների կառավարության աջակցությամբ հրավիրվել է փորձագետ «Flora Holland» ընկերությունից՝ ծաղկի առևտրի (բորսայի) կազմակերպման փորձը՝ Զվարթնոցի գյուղմթերքների կենտրոնում ներդնելու նպատակով, որը, տեղում ուսումնասիրելով Հայաստանում առկա իրավիճակը, ներկայացրել է ազատ տնտեսական գոտի-լոգիստիկ կենտրոնի ստեղծման ճանապարհային քարտեզը: Ներկայումս «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի հետ աշխատանքներ են տարվում բիզնես ծրագրի մշակման և ծրագրի ֆինանսավորման խնդիրների շուրջ: Ծրագրի շրջանակներում Համահայկական ոսկերիչների և ադամանդագործների ասոցացիայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Զվարթնոց օդանավակայանի տարածքում հիմնելու նաև ոսկերչական իրերի և ադամանդի բորսա, որի նպատակով ասոցիացիան արդեն իսկ օդանավակայանի տարածքում ընտրել է համապատասխան տարածք և ներկայումս աշխատանքներ են տարվում բիզնես ծրագրի մշակման և շենքի նախագծման ուղղությամբ: ՏՐԱՍՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ԱՊՀ-ի 6 երկրներում (Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) նախատեսվում է ստեղծել մեկական խոշոր լոգիստիկ կենտրոններ: Հաշվի առնելով Զվարթնոց օդանավակայանում ստեղծվող ազատ տնտեսական գոտու ծրագիրը, որոշում է կայացվել Հայաստանում այն կառուցել օդանավակայանի տարածքում:

• Երևանի քաղաքային կոշտ թափոնների գործածության (ՔԿԹԳ) գործող համակարգը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը դիմել է Համաշխարհային Բանկին խորհրդատվություն ու օժանդակություն ստանալու նպատակով: Համաշխարհային Բանկի Պետական-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կառույցի (ՊՄԵԽԿ) դրամաշնորհով գերմանական Ֆիխտներ ընկերության կողմից իրականացվել է «Մասնավոր հատվածի մասնակցությամբ Երևան քաղաքում կոշտ թափոնների գործածության համակարգի զարգացման վերաբերյալ խորհրդատվական ուսումնասիրության» ծրագիրը:

Ներկայումս ԵՊՄԽԿ ֆինանսավորմամբ և ՀՀ ֆինանսների նախարարության արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի միջոցով կազմակերպվել է Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման 2 օպերատորների և Նուբարաշենի աղբավայրի շահագործողի ընտրության նպատակով միջազգային խորհրդատուի ընտրությունը, որը կավարտվի 2010թ. հունվարի 15-ին:

• Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգը: Շինանյութերի արտադրության, մեքենաշինական, քիմիական և թեթև արդյունաբերության ոլորտների զարգացման համաշխարհային միտումների հիման վրա իրականացվել է հանրապետությունում նշված ոլորտների ներկա իրավիճակի վերլուծություն, խնդիրների ձևավորում և լուծման ճանապարհների ուղենշում:

• Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ թեթև արդյունաբերության հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Թեթև արդյունաբերության ոլորտում առկա ներուժը գնահատելու, զարգացման հեռանկարային ուղղությունները հստակեցնելու նպատակով իրականացվել է հանրապետության թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների գույքագրում, որի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով համաշխարհային միտումները, կիրականացվեն զարգացման ոլորտային ծրագրեր:

• Շահագրգիռ նախարարությունների, գիտահետազոտական հաստատությունների և գործարար շրջանակների մասնագետների մասնակցությամբ կազմակերպվել են շնորհանդես և քննարկում՝ «Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի համալիր վերամշակման հիման վրա նոր տեսակի շինանյութերի արտադրության կազմակերպման ու իրացման խնդիրները Հայաստանում և արտերկրում» թեմայով:

• Հանրապետությունում մեծ ավանդություններ ունեցող՝ ձեռագործ գորգագործության զարգացումը խթանելու, մարզերում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով մշակվել և ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից: Այսպիսով ձեռագործ գորգերի արտադրությանը տրվել են հարկային արտոնություններ:

• ՓՄՁ պետական աջակցության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների հստակեցումը, միասնականացումը և դրանց մոտարկումը Եվրամիության չափանիշներին:

• Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) աջակցությամբ և շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ մշակվել է «Կորպորատիվ կառավարման զարգացման» կանոնագիրք, որը ներկայացվել է աշխատանքային խմբերի քննարկմանը:

• ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ-ում գրանցման ենթակա հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի կադաստրի վարման կարգը և գրանցման մատյանների ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հնարավորություն կտա հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման գործընթացի իրականացման միջոցով կարգավորել ՀՀ-ում շարժական գույքի կադաստրի վարման հետ կապված, ինչպես նաև շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման հետ կապված իրավահարաբերությունները, ապահովել հանրապետությունում շարժական գույքի հաշվառման տեղեկատվության միասնականությունը:

3. Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում

• ՀՀ կառավարությունը, կարևորելով համակարգիչների և ինտերնետային կապի մատչելիությունը Հայաստանի տնտեսության զարգացման համար, 2009թ.-ից սկսել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրագործումը: Ծրագիրն ուղղված է ՀՀ կառավարության կողմից ընդունված SS ոլորտի ռազմավարության իրականացմանը, որի կարևորագույն կետերից են բնակչության համակարգչային հագեցվածության և ինտերնետի հասանելիության աճի ապահովումը: Ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի բնակչության կողմից համակարգիչների օգտագործման մակարդակը՝ առաջարկելով ժամանակակից համակարգիչներ և լիցենզավորված ծրագրային ապահովում մատչելի գներով: Ծրագիրը նաև փորձում է լուծել Հայաստանում մտավոր սեփականության հետ կապված խնդիրներից մեկը՝ ոչ լիցենզավորված ծրագրային փաթեթների տարածված օգտագործումը: Միաժամանակ այն նաև խթանում է ազգաբնակչության կողմից ինտերնետի օգտագործման աճին, որը բարենպաստ պայմաններ կստեղծի էլեկտրոնային ծառայությունների զարգացման համար: Վերոհիշյալ ծրագրի արդյունավետ կազմակերպումն ապահովելու, ինչպես նաև մշակվող ծրագիրը վերջնական տեսքի բերելու համար ներկայումս իրականացվում է պիլոտային ծրագիր: Այն մեկնարկել է 2009թ.-ի սեպտեմբերի 22-ին՝ Երևանում: Համակարգիչներն ընտրվել են հաշվի առնելով

2008 թվականի դեկտեմբերին կայացած հետազոտության արդյունքները, ինչպես նաև Յուլեթ Պակարդ ընկերության կողմից ներկայացված առաջարկությունները: Այսօր ծրագիրը հասանելի է Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, իսկ ընդհանուր վաճառակետերի քանակ 6-ն է (3 Երևան, 2 Վանաձոր, 1 Գյումրի): Մեկնարկային փուլի համար նախատեսվել էր վաճառել 500 համակարգիչ, սակայն վաճառքներն արդեն գերազանցել են այդ թիվը և մինչև տարվա վերջ կազմել 1300 համակարգիչ: Մինչև պիլոտային ծրագրի ավարտը՝ 2010թ.-ի մայիս, կվաճառվի ևս 5000 համակարգիչ: Միաժամանակ, ծրագրին կմիանան նոր վաճառակետեր, իսկ հիմնական փուլում ծրագրի գործունեությունը կտարածվի Հայաստանի բոլոր մարզերով:

Ներկայումս Նախարարությունը դիմել է ինտերնետ մատակարարող մի շարք կազմակերպություններին՝ «Համակարգիչ բոլորի համար» ծրագրին միանալու առաջարկությամբ՝ տրամադրելով համակարգչի հետ միասին ինտերնետին միանալու սարքն անվճար կամ հատուկ սակագնով, ինչպես նաև ներառելով սարքի հետ 3-6 ամիս տևողությամբ մոտ 128 Կբվ ինտերնետային կապից անվճար օգտվելու հնարավորություն: Արդեն նախնական համաձայնություն է ստացվել «Կոռնետ-ԱՄ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ներից:

- 2009թ.-ի նոյեմբերի 4-ից 8-ը ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Սան Հոսե քաղաքում տեղի է ունեցել «ԱրմԹեք 2009» համաժողովը, որն աննախադեպ էր և' մասնակիցների թվով, և' նրանց ներկայացուցչականությամբ:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև «Intel» և «Cisco Systems» ընկերություններում: «Intel» ընկերության հետ ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, այդ թվում համագործակցել «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակում, նաև լայնաշերտ ինտերնետի տրամադրման հարցում (access to broadband internet)՝ օգտագործելով WiMAX տեխնոլոգիան: «Cisco Systems»-ում ևս քննարկվել են հնարավոր համագործակցության ոլորտները՝ «Cisco» ընկերության հնարավոր ներգրավվումը Գյումրիի՝ որպես տեխնոլոգիական քաղաք վերածելու ծրագրում, «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրականացմանը Հայաստանում և այլն:

Համաժողովի շրջանակներում ունեցած հանդիպումների ընթացքում քննարկումներ են ծավալվել Հայաստանում վենչուրային ֆոնդեր հիմնելու հնարավորությունների շուրջ: Նկատի ունենալով այն, որ Հայաստանը բարենպաստ վայր է վենչուրային ձեռներեցության համար, և այն, որ Հայաստանը երկիր է, որն ունի տարածաշրջանում ամենամեծ և առաջադեմ տեխնոլոգիական համայնքներից մեկը, որոշվել է այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկել, և պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄՆ ուսանողներ ուղարկելու համար՝ ուսուցման, փորձի ձեռքբերման և վերապատրաստման հարցում օգնություն ցուցաբերելու նպատակով:

- 2009թ. հունիսի 19-20-ը Երևանում անցկացվել է «Դիջիթեք բիզնես 2009 ֆորումը» և հոկտեմբերի 2-4-ը ամենամյա Դիջիթեք 2009 ՏՀՏ/ԲՏ ցուցահանդեսը: Բիզնես ֆորումին մասնակցել են Հայաստանում գործող շուրջ 30 ընկերություններ, այցելուների թվաքանակը կազմել է մոտ 1500, իսկ ցուցահանդեսին գրանցվել է մասնակիցների թվի աճ. մասնավորապես, մասնակցել են 52 ընկերություն, որոնց թվում առաջին անգամ ամերիկան Օրակլ ընկերությունը:

- Արդեն երկրորդ տարին է ինչ ՀՀ կառավարությունը Գյումրու տեխնոպարկի ծրագրերի շրջանակում ֆինանսավորում է արդյունաբերական դիզայնի և եռաչափ մոդելավորման բնագավառում բարձրակարգ կադրերի պատրաստման աշխատանքները “Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա” ՀԿ-ի հետ համատեղ, որոնց արդյունքում Գյումրիում արդեն առկա են մի քանի տասնյակից ավելի մասնագետներ:

- Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հռոմում տեղակայված “Եվրոպական դիզայնի ինստիտուտի” հետ համատեղ բացել ուսումնական լաբորատորիա Գյումրիում, որը կապահովի արդյունաբերական, նորաձևության և ոսկեգործության դիզայնի ամենաբարձր չափանիշներին բավարարող մասնագետներ, որոնց առկայությունը լուրջ խթան կհանդիսանա հայրենական արտադրանքի մրցակցության ապահովման գործընթացին: Այս ուսումնական հաստատությունը կդառնա Գյումրու տեխնոպարկի շրջանակում իրականացվող ծրագրերի կարևորագույն բաղադրիչներից մեկը: 2010թ. Գյումրիում կհիմնվեն նորագույն ուսումնական լաբորատորիաներ, որոնք կունենան մի քանի տասնյակից ավելի աշխատակայաններ՝ հագեցած տեխնիկական և ծրագրային ժամանակակից միջոցներով:

- Մշակվել են էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգային սկզբունքները, կազմակերպվել են քննարկումներ և շնորհանդեսներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հեղինակավոր ընկերությունների մասնակցությամբ:

- Միջազգային փորձագետի ներգրավմամբ աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի և էլեկտրոնային հասարակության ձևավորման ժամանակացույցի (2009-2014թթ.), ինչպես նաև կիբեր-անվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի մշակման ուղղությամբ: Ժամանակացույցը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին: Վերջիններիս կարծիքները ստանալուց հետո այն կներկայացվի ՀՀ կառավարութուն:

- Հիմնվել է «էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ:

- Անցկացվել է մրցույթ՝ ազգային հիմնացանցի ստեղման նպատակով, որում հաղթող է ճանաչվել Datacon Technology GmbH գերմանական ընկերությունը, որն էլ կիրականացնի հիմնացանցի ստեղծման աշխատանքները:

- Աշխատանքներ են իրականացվել մասնավոր հատվածին 2009թ. հուլիսի 1-ից էլեկտրոնային ստորագրության ծառայությունների տրամադրման նպատակով:

- ՏՀՏ ենթակառուցվածքների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտերի ներդրման նպատակով կազմակերպվել են քննարկումներ և կլոր սեղաններ /այդ թվում՝ միջազգային խոշոր կազմակերպությունների մասնակցությամբ/ :

- Ընդունվել է ՀՀ-ում Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը:

Կազմակերպվել է «Կասպերսկու Լաբորատորիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ե.Կասպերսկու այցը Հայաստան և հանդիպումը ՀՀ վարչապետի հետ, որի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Կասպերսկու Լաբորատորիայի» միջև կնքվել է «Անվտանգ Հայաստան» փոխըմբռնման հուշագիրը:

4. Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքակազմի հասանելիության ապահովում

- 2009թ.-ի ընթացքում ՀՀ պետական կառավարման մի շարք մարմինների ներկայացուցիչների և եվրոպական փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ ԵՀԳԳ ներքո իրականացվող Թվինինգ, Թայեքս և Սիգմա ծրագրային առաջարկների վերաբերյալ: Գործնական և խորհրդատվական հանդիպումների ընթացքում տրամադրվել է խորհրդատվություն ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ և տեղեկատվություն՝ ծրագրային փաստաթղթերի պատրաստման, ներկայացված փաստաթղթերի վերափոխման, հաստատված ծրագրերի իրականացման վերաբերյալ: Պետական կառավարման մարմինների համապատասխան պատասխանատուների և շահառու ստորաբաժանումների հետ պարբերաբար քննարկվել են նախագծվող ծրագրերը, իրականացվող ծրագրերի ընթացքը, տրվել են անհրաժեշտ ցուցումներ: 2009 թվականին ԾԿԳ աջակցության շնորհիվ Եվրոպական Հանձնաժողովի կողմից հաստատվեցին Թայեքս գործիքի 17 հայտ, Թվինինգի 8 ծրագրային առաջարկ, Սիգմա ծրագրով իրականցվել և ընթացքում են 5 ծրագրեր:

- 2009 թվականի դեկտեմբերին Ծրագրերի կառավարման գործակալության և ԵՀ Թայեքս գրասենյակի նախաձեռնությամբ ՀՀ պետական կառավարման մարմինների համապատասխան պատասխանատու աշխատակիցների համար, ՀԿ-ների և եվրոպական փորձագետների մասնակցությամբ, անցկացվել է աշխատաժողով նվիրված Թայեքս ծրագրին: Թայեքս ծրագրի վերաբերյալ դեկտեմբերին ևս մեկ աշխատաժողով է անցկացվել ՀՀ պետական կառավարման մարմիններում նշանակված պատասխանատու անձանց համար:

- Անդրսահմանային համագործակցություն (CBC) ծրագրով ՀՀ շահառու մարմինների, ՀԿ-ների, գործարարների աջակցության կառույցների, առևտրաարդյունաբերական պալատների, կրթական հաստատությունների համար կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ Երևանում և մարզերում: Միջոցառումների արդյունքը եղավ հայկական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը ծրագրին՝ ակտիվորեն մասնակցելով բազմաթիվ ծրագրային առաջարկների պատրաստման և համատեղ ներկայացման գործին:

• Արդեն իսկ մշակվել և տպագրության են հանձնվել Թվինինգ, Թայքես և Սիգմա ծրագրերի վերաբերյալ ուղեցույցները (հայերեն և անգլերեն լեզուներով), գործակալության կողմից պատրաստված եռամսյակային լրագիրը: Գործում է գործակալության ինտերնետային կայքը:

5. Միջազգային չափանիշներին համապատասխան համապատասխանության գնահատման համակարգի ձևավորում

• Նախարարությունում համապատասխանության գնահատման բնագավառի ուսումնասիրման նպատակով ՀՀ ժամանած ՀԲ-ի ներկայացուցիչ, միջազգային փորձագետ Բեատրիս Փանագուայի մասնակցությամբ կազմակերպվել է սեմինար հավատարմագրման բնագավառի վերաբերյալ, որին մասնակցել են բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները:

• Բեատրիս Փանագուան մասնակցել է նաև մի շարք համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացի գնահատման փուլին: Համապատասխանության գնահատման մարմինների գնահատման փուլին ներգրավվել են միաժամանակ «CSP middle east», «Bureau-Veritas»-ի փորձագետները, ինչը մի կողմից նպաստում է գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և գործելակերպի զարգացմանը, մյուս կողմից՝ գնահատված մարմնի վարկանիշի բարձրացմանը:

• Աշխատանքներ են իրականացվել Հայաստանում հավատարմագրման գործընթացը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Հավատարմագրման գործակալությունում միջազգային ԻՍՕ 9001 ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգի ներդրման նպատակով բանակցություններ են վարվել համապատասխան արտասահմանյան կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ «Bureau-Veritas», Ռուսաստանյան Գործակալություն, ինչպես նաև Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի փորձագետների հետ:

6. Հայաստանը՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորում, ներկայացում և ամրապնդում

• Հաշվետու տարում Նախարարության կողմից մշակվել է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ոլորտի պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողների հետ քննարկելուց հետո ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

• Հայաստանում վարվող զբոսաշրջության վիճակագրությունը ՄԱԿ ՁՀԿ մեթոդաբանությանը, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման և ՀՀ-ում զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի ներդրման հնարավորությունների ուսումնասիրման նպատակով ՀՀ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ: Արդյունքում առաջարկություններ են ներկայացվել «ՀՀ 2010-2012 թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նախատեսվում է իրականացնել Հայաստանում վիճակագրական տվյալների հավաքագրման հնարավորությունների և առկա ռեսուրսների գնահատում, ՀՀ-ում զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի ներդրման հնարավորությունների ուսումնասիրում, ՀՀ-ում զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի ներդրման համար հիմնական աղյուսակների և Հայաստանում զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի իրականացման 2011թ. ծրագրի մշակում:

• Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի որոշման համաձայն Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն լուծարելու, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին լիազորություններ վերապահելու և տարածք տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

• Ստեղծված աշխատանքային խմբի անդամների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպված աշխատանքային քննարկումների և ՀՀ մշակույթի նախարարության հետ համագործակցության արդյունքում, ձևավորվել է այն պատմամշակութային հուշարձանների ցանկը, որոնց շրջակայքում հնարավոր է զբոսաշրջային ենթակառուցվածքների ձևավորումը:

- Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թթ. ռազմավարությունը: ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից գումար է հատկացվել Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարությունից բխող ինժեներական լուծումների մշակման, քաղաքի տոպոգրաֆիկական քարտեզի ու մանրակերտի պատրաստման համար: Վերջիններիս իրականացման համար ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ պատրաստվում է տեխնիկական առաջադրանք: Արդեն ստորագրվել է Նախարարության, Ջերմուկի քաղաքապետարանի և ԹայգերՌեվ Սյուիս ընկերության հետ համատեղ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման աշխատանքների կատարման պայմանագիրը:

- 2009թ. փետրվարին կազմակերպվել է EuropeSPA Եվրոպական առողջարանների ասոցիացիայի գլխավոր քարտուղարի և որակի կառավարման պատասխանատուի այցը Հայաստան: Այցի արդյունքում ասոցիացիայի կողմից ներկայացվել է հաշվետվություն Ջերմուկ քաղաքի ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև Հայաստանի և ասոցիացիայի հետագա համագործակցության հեռանկարների վերաբերյալ: Այցի ընթացքում կազմակերպվել է նաև երկու սեմինար՝ Երևան և Ջերմուկ քաղաքներում՝ Հայաստանում գործող առողջարանների ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Իրականացվում է «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի» ընթացիկ մոնիթորինգ և Ծաղկաձոր քաղաքի ներկա վիճակի առավել հանգամանալից համեմատական վերլուծություն:

- Հաշվետու տարում կայացել է ծրագրի շրջանակներում նկարահանված 52 րոպե տևողությամբ «Հայաստանը Նոյի երկիր» վավերագրական ֆիլմի շնորհանդեսը: Ներկայումս ֆիլմը թարգմանվում է այլ լեզուներով՝ տարբեր հեղինակավոր հոռուստաալիքներով ցուցադրելու համար:

- Ընդունվել է «Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Ներկայումս Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից մշակվում է ՀՀ «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագիրը:

- Ընդունվել է «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումը: Այժմ տարվում են աշխատանքներ նպատակային ծրագրի մշակման ուղղությամբ:

- Կազմակերպվել է «Արև» առաջնամագլցման բաց փառատոն՝ ուղղված Հայաստանում արկածային զբոսաշրջության զարգացմանը:

7. Հայաստանի՝ որպես գործարարության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորում և ամրապնդում

- Մի շարք կարևոր քայլեր են ձեռնարկվել ՀՀ-ԵՄ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքմանն ուղղված բանակցությունների մեկնարկի ուղղությամբ: Համաձայնագրի ստորագրումը հայկական ապրանքների համար կապահովի ազատ մուտք ԵՄ շուկա, կբերի առևտրի ծավալների և օտարերկրյա ներդրումների ավելացմանը՝ այսպիսով նպաստելով երկրի կայուն տնտեսական զարգացմանը:

2009թ. փետրվարի 18-19-ը Հայաստան էր ժամանել ԵՄ փաստահավաք առաքելությունը՝ քննարկելու համար ՀՀ-ԵՄ ապագա ազատ առևտրի համաձայնագրի կնքման հնարավորությունները: Հունիս ամսին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակել է փաստահավաք առաքելության պատրաստած զեկույցը՝ ՀՀ - ԵՄ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ապագա բանակցությունների նախապատրաստական գործընթացի վերաբերյալ: Բանակցությունների նախապատրաստման և արդյունավետ իրականացման համար ստեղծվել է նաև գործընթացն ապահովող մարմինների կազմակերպական կառուցվածք, որը հաստատվել է ՀՀ վարչապետի 2009թ. նոյեմբերի 3-ի N 921-Ա «Հայաստան-Եվրամիություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցային գործընթացը կազմակերպելու մասին» որոշմամբ:

- Հայաստանի Հանրապետությունը 2009թ. հունվարի 1-ից կայուն զարգացման և լավ կառավարման համար հնարավորություն ստացավ օգտվել ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից» (GSP+) համակարգից, ինչը հնարավորություն է ընձեռում շահառու երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով:

Հետագայում այս համակարգից օգտվելու շարունակականության ապահովման համար (համակարգում Հայաստանն ընդգրկվել է 2009-2011թթ. համար) Հայաստանը պետք է արդյունավետ կիրարկի մարդու իրավունքներին, հիմնական աշխատանքային պայմաններին, բնապահպանական ոլորտին վերաբերող 27 միջազգային կոնվենցիաները:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամաններով հաստատվել և ՀՀ տարածքում գործողության մեջ են դրվել միջազգային ԻՍՕ և Եվրոպական ԵՆ ստանդարտներին ներդաշնակ ու միջազգային գործելակերպին համապատասխան հավանության մեթոդով ընդունված 36 ազգային ստանդարտներ:

- Հաստատվել է «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը», որի ընդունումը կապահովի միջազգային ստանդարտների պահանջների հետ հանքային ջրերին ներկայացվող պահանջների առավելագույնս ներդաշնակումը և առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը: Հիմք ընդունելով մրգային և բանջարեղենային հյութերի և հյութամթերքների վերաբերյալ Եվրամիության 93/45/ԵԵՍ, 2001/112/ԵՍ և 2003/598/ԵՍ դիրեկտիվները, Կոդեքս Ալիմենտարիուսի ստանդարտները՝ փոփոխություններ և լրացումներ ենկատարվել «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգում»:

- ՀՀ կառավարությունը տնտեսական զարգացման նպատակով, որպես կարևոր ուղղություն է որդեգրել պետական մասնավոր հատվածների համագործակցության մեխանիզմի կիրառումը հասարակական ծառայությունների մատուցման գործում լրացուցիչ միջոցների ներգրավման համար, որը հնարավորություն կտա կրճատել պետական ծախսերը և ապահովել երկարաժամկետ աճ: Այդ նպատակով մշակվել է Պետական-մասնավոր համագործակցության զարգացման հայեցակարգը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 29.01.2009թ. N4 արձանագրային որոշմամբ: Միաժամանակ, մշակվել է «Պետություն-մասնավոր հատված գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ստեղծվել է Պետություն-մասնավոր հատված գործընկերության գործակալությունը: Եվրամիության SIGMA ծրագրի շրջանակներում հրավիրվել են փորձագետներ, որոնց հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն աջակցելու ինչպես օրենսդրական դաշտի, այնպես էլ կառույցի ստեղծմանը և կարողությունների զարգացմանը:

8. Կայուն զարգացման ծրագրի իրականացման համակարգի ներդրում

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տարածաշրջանում և գործընկերներ երկրներում տնտեսական զարգացումների կանխատեսելիության ցածր մակարդակը ստիպեց նոր լուծումներ փնտրել սոցիալ-տնտեսական քաղաքականության պլանավորման համակարգում: Երկարաժամկետ պլանավորման համակարգը ժամանակավորապես փոխարինվեց կարճաժամկետ պլանավորմամբ: ԿԶԾ իրականացման աշխատանքները համակարգող խորհրդի որոշմամբ մեկնարկեց 2010-2011 թվականների քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի մշակման աշխատանքները: Այն ժամանակավորապես կփոխարինի ԿԶԾ-ին, կներկայացնի հակաճգնաժամային քաղաքականությունները, հիմք կհանդիսանա առաջնահերթ բարեփոխումների և գալիք ՄԺԾԾ-ի համար: ԿԶԾ համակարգման խորհրդի որոշման իրագործման նպատակով ԿԶԾ աշխատանքային խումբը լայն համագործակցություն ծավալեց դոնոր կազմակերպությունների (ՀԲ, ՄԱԶԾ, ԳՏՀ) և փորձագիտական շրջանակների հետ: Ներկայումս ընթանում հետազոտական, վերլուծական և համաշխարհային փորձի գնահատման աշխատանքները, որի հիման վրա կներկայացվեն Հայաստանի հեռանկարային զարգացման նպատակադրումներն ու կարճաժամկետ գործողությունների ծրագիրը: